

ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ԲԱՏԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ*Տեսուչ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի***ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ ՄԵՐ ՎԵՀԱՓԱՌ
ՈՒՍՈՒՅՉԱԴԵՏԸ**

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մանկավարժական և ուսումնականության գործունեության մասին հավանաբար ճիշտ կլինի խոսել և Նորին Սրբության իրագործումների արժանի գնահատականը փալ ևս մի քանի փարիներ հետո, մասնավոր, որ այս մասին առ այսօր համարյա թե չի գրվել, բայց նույնիսկ այսօր իր հնգամյա Հայրապետական իրագործումները, առանց չափազանցության, արդեն բավական են, որ նա Հայոց Եկեղեցու պարամության մեջ ունենա իր պարավաճող և անգնահատելի փեղը:

Այս փողերը շարադրելիս միտքս է գալիս Նորին Սրբության՝ Հոգևոր Ճեմարան ընդունվելու և ուսանելու փարիները: Վեհափառը 14-ամյա պարանի էր, երբ, հոր ձեռքը բռնած, եկավ Ճեմարան ընդունվելու: Սա հիշեցնում է ինձ ԺԷ դարի մեր երկու մեծագործ Հայրապետներին՝ Մովսես Տաթևացի (կթղ. 1629-1632 թթ.) և Փիլիպոս Աղբակեցի (կթղ. 1633-1655 թթ.) Կաթողիկոսներին, որոնք նույնպես հոգևոր դպրոց են մտել 14-15 փարեկանում և հետագայում ազգային-եկեղեցական բեղուն գործունեությամբ իրենց արժանի փեղը գրքավել մեր Եկեղեցու պարամության մեջ:

Իսկապես որ, աստվածային նախախնամությունը հայոց քրիստոնեադրոշմ ազգին պարգևում է շնորհունակ Հայրապետներ, որոնց մեծության մասին նախաձայնում է նրանց պարանկությունը:

1971 թ. Նորին Սրբությունը երբ ավարտեց Հոգևոր Ճեմարանը, 20 փարեկան էր: Նրա առաջադիմությունն այնքան բարձր էր, որ երանաշնորհ Վազգեն Վեհափառի կողմից նշանակվեց Հոգևոր Ճեմարանի՝ Նոր Կրակարան առարկայի դասախոս և զուգահեռաբար փեսչի օգնական:

21 փարեկան էր, երբ ԱՄՆ հայոց Արևելյան թեմի բազմաշնորհ առաջնորդի՝ երջանկահիշատակ Տ. Տիրան արքեպս. Ներսիսյանի ձեռամբ Հայոց ապագա Հայրապետը կոչվեց արեղայության աստիճանի:

Տիրան արքեպիսկոպոսի նման մեծությունն արդեն նկատելի էր իր հոգեգավակի ընդունակություններն ու ձգվումները և ձեռնադրությամբ Գարեգին անունը փվեց ապագա Հայրապետին:

Երանաշնորհ Վազգեն Ա Վեհափառը, մտքն ճանաչելով իր սանին և բարձր գնահատելով Գարեգին Հայր Սուրբի ուսումնաբեց ձգվումները, նրան ուղարկեց Ավստրիա, ապա մի քանի փարի հետո՝ Գերմանիա, և երկու երկրներում էլ Հայր Սուրբն սրացավ համալսարանական կրթություն՝ մինևույն ժամանակ կատարելով նաև հովվական ծառայություն:

Գարեգին Հայր Սուրբը Մայր Աթոռ վերադառնալուց հետո նշանակվեց Արարապյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի օգնական, իսկ կարճ ժամանակ հետո՝ Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ:

Երանաշնորհ Վազգեն Վեհափառը, բարձր գնահատելով 32-ամյա Գարեգին Հայր Սուրբի հոգևոր և մարավոր կարողությունները՝ հարստացած գերմանական համալսարանական գիտելիքներով, ձեռնադրությամբ նրան բարձրացրեց եպիսկոպոսական աստիճանի:

Նորին Սրբությանն ի մուրտ ճանաչողները շատ լավ գիտեն, թե նա ինչ հսկայական աշխատանք կատարեց Արարապյան Հայրապետական թեմում՝ թեմը բոլոր տեսակետներից դարձնելով օրինակելի:

Իսկապես որ, աշխատանքները կատարվում էին բացառիկ հմտությամբ և կազմակերպվածությամբ, այնպես որ, այն փարիներին, երբ մեր Եկեղեցին և ժողովուրդը գրկվում էին Խորհրդային Միության մուրճի և սալի արանքում՝ ավելացրած 88-ի երկրաշարժն ու արցախյան պայերազմը, իսկ Մայր Աթոռը՝ նյութական դժվարին պայմաններում, Գարեգին Սրբազանը կարողացավ իր աշխատասիրությամբ ու հեղինակության շնորհիվ ոչ միայն կայունացնել ու միջոցներով ապահովել թեմի տնտեսությունը, այլև Մայր Աթոռի իրավիճակը շոշափելիորեն բարելավել:

Լուսահոգի Վազգեն Վեհափառից, որը սովորություն ուներ Նոր փարվա նախօրեի հանդիսության ընթացքում մի տեսակ հաշվեքվություն-գրույց անցկացնելու Մայր Աթոռի ողջ միաբանության հետ և ներկայացնելու Մայր Աթոռի տնտեսական վիճակի հետ կապված հարցեր, հաճախակի ականջալուր եմ եղել հետևյալը խոսքերին. «Ես հպարտ եմ, ասում էր Վազգեն Վեհափառը, որ այսօրվա մեր եկեղեցականների շարքում կան անհատականություններ, որոնցից է Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը, որն իր քրտնաջան աշխատանքով կարողանում է նպաստավոր պայմաններ ստեղծել մեր Եկեղեցու նյութական միջոցներն անհամեմատ ավելացնելու համար, և կարող եմ ասել, որ հսկառակ այն հանգամանքին, որ Մայր Աթոռի ծախսերն ավելացել են, Մայր Աթոռի ներքին թեմերից ստացված միջոցները՝ հարկապես Արարապյան Հայրապետական թեմի, Գեղարդավանքի և Մայր Տաճարի եկամուտները բավարար են Մայր Աթոռը նյութապես ապահովելու, բաց առյալ շինարարական աշխատանքների ծախսերը»:

Վազգեն Վեհափառի խոսքը հիմնականում վերաբերվում էր Արարապյան Հայրապետական թեմի այն ժամանակվա առաջնորդական փոխանորդին՝ Գարեգին Սրբազանին, որը ոչ միայն կարճ ժամանակում կարողացել էր ապահովել հոգևոր կյանքի առաջընթացը, այլև կառուցողական նորանոր իրագործումներ էր կատարում:

Այսպեղ հարկապես կցանկանայինք ամփոփ ներկայացնել Նորին Սուրբ Օծության գործունեությունը՝ կապված Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հետ:

Վեհափառ Հայրապետն իր ընտրությունից հետո արդեն 2000 թ., Գևորգյան Ճեմարանի դասախոսական կազմը նոր դասախոսներով համալրեց՝ իր շուրջը հավաքելով վաստակավոր, ճանաչված մանկավարժների մի մեծ խումբ:

Այնուհետև ձեռնամուխ եղավ Ճեմարանի համար նոր բարձրագույն հաստատությանը պարշաճ ուսումնական ծրագրի կազմմանը: Հիշում եմ, թե ինչպես դասախոսական ողջ կազմին հրավիրեց Բյուրականի Հայկաշեն կաթողիկոսական ամառանոց և ներկաներին

մանրամասն բացառնեց Ճեմարանի նոր ուսումնական ծրագիր ունենալու անհրաժեշտությունը՝ նույնիսկ ասելով, որ՝ եթե հարկն է, Հայկաշենում պիտի մնանք այնքան ժամանակ, մինչև վերջնական Կոնգրեսի բերենք ուսումնական ծրագիրը:

Մեր առջև դրված խնդիրն իրագործելուց հետո վերադարձանք՝ մի քիչ հպարտ զգալով, որ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի համար կազմվել էր նոր ուսումնական ծրագիր, բայց, ինչպես պարզվեց, Վեհափառը ևս իր կողմից վերջնական խմբագրության էր ենթարկել նորակազմ ծրագիրը: Նոր ուսումնական ծրագիրը 2000 թվականից իսկ դրվեց գործադրության Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Գործադրության դրվելուց երկու տարի հետո, երբ Նորին Սրբությունը համոզվեց, որ ծրագիրը ոչ միայն գործող է, այլ նաև լիովին համապատասխանում է համալսարանական չափանիշներին, և ավելին՝ ուսումնառության մակարդակն զգալիորեն բարձրանում է, դիմեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանին Բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ շնորհելու: Արդյունքում արդեն 2000 թ. մեր Ճեմարանը պետականորեն ճանաչվեց որպես Բարձրագույն ուսումնական հաստատություն:

Այս իրողությունն ուրախություն էր բոլորիս համար, առավել ևս՝ Նորին Սրբության, գնահատված էր Գևորգյան Ճեմարանի պատմական փառավոր վաստակը հայ ազգային-եկեղեցական կյանքում, քանզի 1874 թվականին հիմնված Ճեմարանը 2004 թվականին իր 130-ամյա համագրային հանդիսությանը ներկայացավ արդեն ճանաչված որպես Բարձրագույն ուսումնական հաստատություն, մի բան, որ եղել էր մեր Եկեղեցու բոլոր նախորդ երջանկահիշատակ Հայրապետների երազանքը՝ չնայած որ նրանց կողմից Ճեմարանը միշտ էլ այդպիսին էր ընկալվել՝ առանց պաշտոնական հաստատում ունենալու:

Գևորգյան Ճեմարանի ուսանողներից լավագույնները Վեհափառ Հայրապետի գործունե աջակցությամբ գրեթե պարտադիր կարգով կրթությունը շարունակում են նաև արտասահմանի ճանաչված աստվածաբանական բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Այսօր հպարտորեն կարող եմ ասել, որ մեր Ճեմարանի շրջանավարտներից ոմանք, վերադառնալով եվրոպական համալսարաններից, Նորին Վեհափառության կողմից նշանակվում են Մեր հաստատությունում կրոնական ու աստվածաբանական առարկաների դասախոսներ: Վեհափառի ջանքերն ունենում են իրենց շոշափելի արդյունքները: Կարող եմ վկայել, որ այսօր արդեն մեր շրջանավարտ սաների մեջ ունենք ապագա հայագետ-հոգևորականներ:

Համոզված եմ, որ Նորին Վեհափառության գործունեության ոսկե շրջափայլ առաջին և կարևոր օղակը Գևորգյան Մեր աստվածաբանական համալսարանն է, որի առաջընթացի համար ոչինչ չի խնայում Վեհափառը, և հեռու չէ այն օրը, երբ Գևորգյան Ճեմարանը բարձրակարգ հոգևոր և աշխարհական դասախոսների միջոցով իր սաներին կտա ինքնաբավ կրթություն, և մեր Եկեղեցին այլևս կարիքը չի ունենա իր սաներին ուղարկելու արտասահմանյան այլևայլ համալսարաններ:

Այսօր Վեհափառ Հոր կողքին է գիտնական մտավորականների մի ամբողջ փաղանգ՝ ի դեմս Գևորգյան և Վազգենյան Ճեմարանների հոգևոր և աշխարհական դասախոսների,

որոնք պարբերաբար են Նորին Սրբության՝ Ճեմարանի հետ կապված ուսումնական ծրագրերը կյանքի կոչելու:

Նկարագրվածը Նորին Սուրբ Օծություն Գարեգին Բ Վեհափառի մանկավարժական և ուսումնականության ուղղվածությամբ իրականացրած գործերի մի փոքր մասն է միայն:

Նորին Սրբությունն էր, որ դեռևս փոխառաջնորդության փարիներին Սևանա կղզու պարմական վանական համալիրին կից հիմնեց Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցը, որն իր քառամյա դասընթացով այսօր համարվում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի մասնաճյուղը: Այսօրեղ հոգևոր դպրոց հիմնելու երազանք ժամանակին ունեցել էր նաև մեծն Մխիթար Սեբաստացի աբբահայրը, որը 17-րդ դարավերջին գտնվում էր Սևանավանքում. նրա երազանքը սակայն իրականություն դարձավ միայն հեռավոր Իփալիայի ափերին:

Վեհափառն էր, որ Խորհրդային Միության փլուզումից հետո Երևանի գրեթե բոլոր համայնքներում քանդված ու թալանված պիոներական փնները նախանձախնդորոն ամբողջությամբ նորացնելով՝ դրանցում հիմնեց Հայորդյաց փներ, որտեղ այժմ ուսանում ու կրթվում են բազմաճյուղի մանուկներ, որոնք, բացի փարբեր արվեստներից ու արհեստներից, ստանում են նաև հոգևոր դաստիարակություն:

Վստահ եմ, որ նրանք, ովքեր մտաբանված են մեր Եկեղեցու և ժողովրդի ապագայով, մեծ հույսեր են կապում Նորին Սրբության հետ, որի անխոնջ ջանքերով պիտի բարգավաճի մեր Եկեղեցին, իսկ մեր նվիրական հասարակությունը՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, իր վերադարձի՝ Նորին Սրբության Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի անմիջական առաջնորդությամբ ու ղեկավարությամբ պիտի կատարի իր առաքելությունը՝ Հայաստանյայց Եկեղեցուն փառով ճեմարանական ու համալսարանական հավաքավոր և մտավոր բարձր մակարդակ ունեցող նվիրյալ եկեղեցականներ:

Աղոթում և մաղթում եմ ազգիս Սրբազնագույն Հայրապետին համերաժ ժամանակոք ապահով և անխռով գահակալություն և իր Վեհափառական հոգում ծրարված նվիրական իղծերի իրականացում՝ ի փառս Աստծո և ի շինություն Հայաստանյայց Մայր Եկեղեցու:

Թող Տերը շնն ու անսասան պահի Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին իր Քրիստոսահիմն Մայր Աթոռով և իր ընտրյալ Գահակալով: